ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 09 » հունիս 2021թ. N 73 Ա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԲԱՇԽԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹԻՎ 27 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ մասերով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարզպետարանի առանձին բնագավառների գործառույթներն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը բաշխել մարզպետի տեղակալների և մարզպետարանի գլխավոր քարտուղարի միջև՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել մարզպետի տեղակալների կողմից իրականացվող ընդհանուր բնույթի գործառույթները՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2008 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի, մարզպետի տեղակալների միջև բնագավառների պարտականությունների բաշխման մասին» թիվ 27 որոշումը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

10.06.2021

X

ՆԱՆԵ ԱՍԱՏՐՅԱՆ

Signed by: ASATRYAN NANE 7604820042

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված թիվ 1՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ. հունիսի 09-ի թիվ 73-Ա որոշման

Մարզպետի տեղակալների և մարզպետարանի գլխավոր քարտուղարի միջև մարզպետարանի առանձին բնագավառների գործառույթներն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաշխում

1. **Մարզպետի տեղակալ Դ. Սարգսյան**
   1) Քաղաքաշինություն,
   2) գյուղատնտեսություն և բնապահպանություն,
   3) տեղական ինքնակառավարում և հանրապետական գործադիր մարմինների հարցեր,
   4) քարտուղարություն,
   5) հողաշինություն և հողօգտագործում:

2. **Մարզպետի տեղակալ Ն. Ասատրյան**
   1) Կրթություն, մշակույթ և սպորտ,
   2) առողջապահություն և սոցիալական ապահովություն,
   3) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն,
   4) զորահավաքային նախապատրաստություն,
   5) զարգացման ծրագրեր, զբոսաշրջություն և վերլուծություն,
   6) տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր:

3. **Մարզպետարանի գլխավոր քարտուղար**
   1) Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացում,
   2) իրավաբանություն,
   1) անձնակազմի կառավարում:

Հավելված թիվ 2 ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ. հունիսի 09-ի թիվ 73-Ա որոշման

Մարզպետի տեղակալների կողմից իրականացվող ընդհանուր բնույթի գործառույթներ

1. *Համակարգում են մարզպետարանի աշխատանքները մարզպետի կողմից իրականացվող քաղաքականության՝ իրենց հանձնարարված բնագավառներում:*
2. *Իրենց լիազորությունների սահմաններում համակարգում են մարզպետին վերապահված բնագավառների քաղաքականության ապահովումը մարզպետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով, տալիս են ցուցումներ և հանձնարարականներ:*
3. *Վերահսկում են հանձնարարականների կատարումը:*
4. *Կազմակերպում են նախնական քննարկումներ մարզպետի մոտ քննարկվելիք հարցերի վերաբերյալ:*
5. *Իրականացնում են աշխատանքներ մարզպետի հանձնարարականների մասնագիտական ուսումնասիրությունների ու վերլուծությունների ուղղությամբ, ներկայացնում են համապատասխան տեղեկանքներ:*
6. *Պարբերաբար մարզպետին են ներկայացնում տեղեկատվություն՝ իրենց ամրագրված բնագավառներում տիրող վիճակի մասին:*
7. *Մարզպետի հանձնարարությամբ իրականացնում են այլ գործառույթներ:*